է արծաթեղինոց գոյնը։ պատց սպիտիչ ալ ըլլար։ Կ՚առնումք ապակեայ լայն բերանով անօթ մի, ասոր մէջ կը տաքցնենք ծրծմ. բական թթուտ (acide sulfurique. տե. գած խաղը) առ հատաբակ ամէն դեղավաճառ. ներու. քով կը գտնուի։ սպիտէն առարկան (խաչ մի կամ մատանի մը) շատ անգամ այս թթուտին մէջ կ՚ընկղմեմք և կը հանեմք, յետոյ՝ նախ ջերմ ջրով, վերջը պաղ ջրով կը լուանք զայն կը չորցնենք թեփով (սղոցուկով), այս ամէն բան կատարելէն վերջ կը տեսնենք որ նա ասասիկ կեղտով կը փայլի իբրև դեռ նոր շինուած ըլլար։ Բայց այս գործը կատարելու համար մի քանի կարևոր զգուշութիւնք կը խնդրուին. առաջին՝ ասա. կան։ սպիտէնի մը ծայրը կապել և անով ընկղմել թթուտին մէջ։ Երկար ժամանակ առարկան չի թողուլ թթուտին մէջ, բաւական է մի քանի մանրերկրորդ։ Երկրորդ. թթուտին քանակը գոնէ այնչափ ըլլայ, որ կարենայ բոլորովին ծածկել զառարկան իր մէջ։

Ի՞նչպէս պէտք է լուալ սպունգը։ — Սպունգը ենթակայ է շատ անգամ աղտեղանալու, քանի որ անասկան և անտեսական պիտոյից մէջ միշտ գործածական է։ Այդ փոխանակ նետելու այս աղտոտ սպունգները, լաւագոյն և ընտրելագոյն է առնուլ մի լիտր ջուր խառնել ասոր հետ մի ապուրի դգալ աշակ (ammoniaque) յետոյ դնել սպունգը այս հեղանիւթին մէջ, ժամէ մը վերջը երբ կը հանեմք զայն կը տեսնեմք որ նա բոլորովին մաքրուած սրբուած է։ ալ ուրիշ բան չի մընդար բայց եթէ չորցնել զայն և գործածել։

Արուեստական կոյգի։ — Կարոլոս Կոյէն կ՚աշխատի արուեստական կոյգի մը հաստատել Աղլանտեան Ամերիկոսի վրայ Լոնկ — Այլենտ (Long Iislend) 16 հազարամետր հեռաւ։ Դիոլուն խորութիւնն է 24 մետր. հիմ պիտի ըլլան 60 երկաթեայ արկղներ որոնց իւրաքանչիւրին տրամագիծն 8 մետր է, ասոնց վրայ պիտի բարձրացրնեն առաջնակարգ պանդոկ մի որուն նմանն աշխարհիս վրայ չէ տեսնուած։ Այդպէսի անունը դրուած է Առչանտիք։

ՀԱՅ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ ՅԻՇԱԼԻՍ

Գենուայի իննևտասներորդ Դար (Il Secolo XIX) անուամբ լրագիրն, մեր ազգային երկու երգիչներուն վրայ գովասանօք կը գրէ հետևեալ տողերը «Վաղը երկկոյեան (Ն. Տ. $^2/_3$) հրաշալի կերպով պիտի ներկայացուի Լուչիա Լամմերմոր (Lucia Lammermor) թատերգութիւնն։ Դոնիզետեայ թատերգութեան երեք արարուածոց ներկայացուցիչք պիտի հանդիսանան, տիկին Օլգա Լիսովինոֆ Գիկիպուլա, վերնաբամբ Պարոն Արշակ Կոստանեան, ճարտար թատերգակ ամենասքանչելի ձայնիւ. և վաստակաւոր Պարոն Բեգլար Ամիրջանեան, որ արդէն իսկ քանի թատերգակ մ՚է, և առաջին գիշերահանդէսներէն, հանրութեան համակրանքը գրաւեց»։

Նոյն լրագիրն, պարձեալ կը գրէ. «Ամենալաւ թատերգակներ հանդիսացան, վերնաբամբն Պր. Արշակ Կոստանեան և հոչակաւոր վաստակաւոր Պր. Բէգլար Ամիրջան, որք իրենց ունեցած առաջին համբաւն և ևս հաստատեցին»։

Նոյն քաղաքին Ցառեչուած Կոպիտարոյի, (Suplemento al Caffaro) լրագիրն կը գրէ. «Գովելի թատերգակներ հանդիսացան Բամբերգակն Պր. Արշակ Կոստանեան և Պր. Բէգլար Ամիրջան, Ջերմ և խանդակաթ ձայնիւ»։ Թատերգութիւնը կատարուեցաւ Գենուայի մեծ ի Սամպիերտարին շաբաթ իրիկուն 4 Յունիս 1895 $^8/_4$։ Հանդիսականաց բազմութիւնը անթիւ և անհամար էր, թատրոնին մէջ ամենևին պաղատ տեղ չէր մնացած, և։ զրեթէ մեծ բազմութիւն մը զրը-

digitised by A.R.A.R.@

կուած մեաց այս հրաշալի թատերական հանդիսի տեսութենէ, կանխապէս չկարենալով իրենց յատուկ տեղերը բռնել։

Ցիշեալ լրագիրը յունիսի 16 թերթին մէջ գարձեալ գովասանօք կը գրէ հեռուեալ տողերը « Կոստանեան՝ որուն փափուկ և հրապուրիչ ձայնը յարմար է երգելու փերենանդիի ամբողջ թատերգութեան գլխաւոր եղանակաց անուշ ելևէջներու աստիճանաւորութիւնը, բռնադատուեցաւ քաջ արուեստագետը հնչեցուցեալ յուզիչ շեշտով Ազնիւ Ոգին (Spirto gentil), և եռանդագին ծափահարուեցաւ։ իսկ Ամիրջան՝ Ալփոնսոս արքայի տարազով ընտիր արուեստագէտ հանդիսացաւ, երկիւղած երգիչ և փափուկ, հանճարեղ դերասան։ Ա՛ հայրական Սէր (A tanto amor) երգելն՝ և երրորդ արարածին վսեմ վերջաւորութեամբ, խուռն բազմութեան ծափահարութեան արժանացաւ »։

Նոյն լրագիրը գարձեալ մեր երկու թատերգակաց երկրորդ անգամ Դոնիզզեթեայ Փաւորիտայն (Favorita) երգելուն առթիւ՝ կը յաւելու։ Պ. Կոստանեանի համար կ'ըսէ. « Ուզեցին՝ և նա ընդունեցաւ, կրկնել Ազնիւ Ոգին, յորմէ՝ Կոստանեան զարմանալի հանդիսացաւ »։ իսկ Պ. Ամիրջանի համար կը գրէ. « Ուրախալից ընդունելութեան արժանացաւ վաստերգակն Ամիրջան, որ Ալփոնսոս արքայի տարազով կրցաւ ցոյց տալ իր ներհուն, արդոյ և գերազանց արուեստը »։ Ինենտասներորդ Դար այս հանդիսի առթիւ կը գրէ. « Կոստանեան՝ փերնանդոյի (Fernand) դերին մէջ ամենայաւ հանդիսացաւ. իւր գեղեցիկ, փափուկ, զգայուն ձայնը յարմար է յաղթելու իւր դերին ամենամեծ դժուարութեանց։ Բէպլար Ամիրջան ամենաճիշդ Ալփոնսոս մը գարձաւ, ընտիր և ի վեր քան զամենայն ամենանուշիմ. նա ամէն թատերգութեանց մէջ երևելի հանդիսացաւ արժանանալով հանրութեանց գովասանաց։

Ցաղանգաւոր և ազնիւ բամբերգակն Կոստանեան փաւորիտայ վիպասանութեան երրորդ արարածէն վերջը պիտի երգէ Ազնիւ Ոգին՝ որոյ համար մեծ ծափահարութիւն ընդունած էր անցեալ իրիկունները »։

ԱԶԳ

1. — Որ և իցէ գիրք՝ թէ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրութեանս նուէր ղրկուի, ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ երկամեայ պրակաց մէջ պիտի ծանուցուի Նոր հրատարակութիւնք խորագրով։

2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց կը ցանկան (նոյնպէս) մեր տպած գրքերէն ունենալ, պէտք են առաջուց իմացնել մեզ՝ թէ ինչ գիրք է յղելիքը, և ինչ անոր փոխարէն պահանջելիքը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ գրքերը։

1. Ուղեւորութիւն Տ. Տ. Մկրտիչ վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց. — Երուսաղէմից — Էջմիածին. գրեց Մեսրովբ Վարդապետ Տէր-Մովսիսեան միաբան Ս. Էջմիածնի տպ. Յէջմիածին. գինն է 1 ռուբլի։

digitised by A.R.A.R.@